Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Էլեկտրաէներգետիկական համակարգում հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության դիմաց վճարումներ կատարելու համար հաշվեկշռման ծառայություն մատուցող կայանի («Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի) համար առավել ճկուն պայմաններ, էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի) կողմից էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կարգավորվող և ազատականացված բաղադրիչներում իրականացվող գործարքների համար վճարումների կատարման տարբերակված ռեժիմներ, ինչպես նաև մեծածախ շուկայում կնքված գործարքների դիմաց վճարումների կատարման շրջանակում՝ շուկայի մասնակցի կողմից վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտում արտացոլված ցուցանիշների վիճարկման դեպքում առավել ճկուն կարգավորումներ սահմանելու նպատակով նախատեսվում է լրամշակել Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները:
- Ինքնավար էներգաարտադրության գործընթացի շրջանակում՝ ինքնավար խմբի մասնակիցների, իսկ միևնույն ինքնավար էներգաարտադրողի կողմից տարբեր կետերում էլեկտրական էներգիա արտադրելու և սպառելու դեպքում՝ արտադրության կամ սպառման կետերի փոփոխության ընթացակարգերի, հաշվարկային տարվա ընթացքում ինքնավար խումբ ստեղծելու կամ այլ խմբում ընդգրկվելու դեպքում առկա՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի դրական տարբերության մասով հատուցում տրամադրելու, ենթասպառողի կողմից ինքնավար

էներգաարտադրություն իրականացնելու, էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության վճարի գանձման առանձնահատկությունների, ինքնավար էներգաարտադրողին ներկայացվող՝ հատուցման (վճարման) ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտում բաշխված (հաշվանցված) էլեկտրական էներգիայի քանակությունների վերաբերյալ անհրաժեշտ կարգավորումներ սահմանելու նպատակով բախատեսվում է լրամշակել հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N517Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները և 2022 թվականի ապրիլի 20-ի N150Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի (ինքնավար էներգաարտադրող-երաշխավորված մատակարար) պայմանագրի օրինակելի ձևը:

- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2022 և 2023 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման, գնման գործընթացի կազմակերպման, պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:
- Վերանայել Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:
- Լրամշակել էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում կարգավորվող անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը:
- Մշակել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը:

- Իրականացնել առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման և վերահաշվարկին վերաբերող ընթացակարգերի՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններին համապատասխանության մոնիթորինգ:
- Լրամշակել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրված՝ խմելու ջրի մատակարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանները:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:
- Իրականացնել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող՝ բաժանորդներին վճարված տուժանքների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանը, համայնքներում ամրակցված կապի ցանցերի ներթափանցելիության ապահովմանն ու հանրային ամրակցված կապի ցանցերի շարունակական արդիականացման աշխատանքների իրականացմանը:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն՝ ամփոփել և մինչև սույն թվականի մայիսի 1-ը հրապարակել հանձնաժողովի 2022 թվականի գործունեության հաշվետվությունը:

- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
    - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
    - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
    - նոր պառողի կամ պառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամյակային ցուցանիշները,
    - էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: